# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Գառու Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 64 | GARU GROUP | Գառու Գրուպ ՍՊԸ | Կոշիկ դասական ԳՕՍՏ-26167-2005: Կոշիկն արտադրվում է քրոմային դաբաղմամբ, հարթ, բնական մակերես ունեցող, 1.3-1.5 մմ հաստության երեսացուի կաշվից (արգելվում է օգտագործել խոզի կաշի): Կոշիկը բաղկացած է վերնամասից, քթամասից, լեզվակից, կողամասերից և (հետնամասից) կրնկամասից, որն էլ իր հերթին պետք է լինի կոճերից ցածր և ծածկի ոտնաթաթի հետևի ամբողջ մակերևույթը: Կոշիկի քթամասն ու կրնկամասը՝ կոշտ: Կոշիկի վերնամասը մշակված է դեպի ներս ծալվածքով (ունի լուաֆեռ դիզայն), իսկ լեզվակը՝ կեղծ փեղկերով ու քուղերով: Կոշիկի վերնամասն ամրանում է կողամասերին ձգվող էլաստիկ ժապավեններով (շտեբլետներով)՝ բաց կտրվածքով և զույգ (լենտիմ) կարով:Կոշիկի վամպն (սայուզկան) ու կրնկամասը մշակված են կաշվի հակադար-ձումով և կարված են հակադարձման եզրից 2.0-4.0 մմ հեռավորության վրա՝ մեկ կամ երկու կարով: Կոշիկի կարերի ամրությունը պետք է լինի 115 Ն/սմ (կամ 11.5 կգ/սմ, ԳՕՍՏ-447), որի փորձարկումն իրականացվում է ԳՕՍՏ-9292 համաձայն: Կոշիկի ներսամաս (այդ թվում ներդիրը) ամբողջությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մշակված է 0.9-1.1 սմ հաստության սև սպիլոկով (մեշենով), իսկ կրնկամասը ներսից մշակված է նաև լրացուցիչ սպիլոկով: Կոշիկի հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2.0-2.2 մմ հաստության բնական, կոշիկի համար նախատեսված ստվարաթղթերից (սոսնձվող երկրորդ շերտը ձգվում է մինչև թաթամաս), որոնց միջև մշակված է կոշիկի համար նախատեսված մետաղական սուպինատոր: Կոշիկի հիմնական ներդիրի և վրան մշակված սպիլոկի միջև` կրնկամասում մշակված է նաև 0.3-0.4 սմ հաստության սրտաձև սպունգ:Կոշիկի տակամաը (տակացուն) միացվում է կոշիկին ձուլման եղանակով և պետք է պատրաստված լինի առնվազն 6.0-7.0 մմ հաստության երկշերտ ջերմոպոլիուրետանային նյութից, ընդ որում աշխատող (շփվող) շերտը` թերմոպլաստիկ պոլիուրետանից, իսկ չշփվող շերտը` ծակոտկեն (պորիստի) պոլիուրետանից: Տակացուի աշխատող (շփվող) շերտը պատրաստված է առնվազն 2.5-3.0 մմ հաստութ-յան թերմոպլաստիկ պոլիուրետանից, իսկ չշփվող շերտը` առնվազն 3.5-4.0 մմ հաստության ծակոտկեն (պորիստի) պոլիուրետանից: Տակացուին միացվող առնվազն 24-25 մմ հաստության կրնկամասը նույնպես պատրաստված է երկշերտ ջերմոպոլի-ուրետանային նյութից, ընդ որում աշխատող (շփվող) շերտը` առնվազն 3.5-4.0 մմ հաստության թերմոպլաստիկ պոլիուրետանից, իսկ չշփվող շերտը` առնվազն 20.5-21 մմ ծակոտկեն (պորիստի) պոլիուրետանից: Կոշիկի տակամասի (տակացուի) խզման բեռնվածությունը պետք է լինի 58 Ն/սմ (կամ 5.8 կգ/սմ, ԳՕՍՏ 21463), իսկ փորձարկումն իրականացվում է ԳՕՍՏ 9292 համաձայն: Կոշիկը տակամասում (տակացուի վրա) պետք է ունենա դրոշմ, որի վրա պետք է նշված լինի չափսը և արտադրող կազմակերպության անվանումը: Փաթեթավորումը` առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, մեկ արկղի մեջ`10-20 զույգ, տեսականին առանձին ստվարաթղթե տուփերի մեջ, մեկ տուփի մեջ` 1 զույգ, արկղի 4 անկյունները պետք է լինեն ամրացված և կայուն: Արկղերը` տպագրված կամ պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, պայմանագրի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կոդը, մատակարար և/կամ արտադրող կազմակերպությունների անվանումները, արտադրման տարեթիվը: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները` համաձայն տեխնիկական բնութագրում նշված ԳՕՍՏ-ի: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված, արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում Էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված կաշվի հաստության և որակի վերաբերյալ եզրակացություն, մասնավորապես` - Լաբորատոր փորձարկման համար նմուշի ընտրում-ԳՈՍՏ 9289, - Կաշվի հաստության որոշում, - Կարերի ամրության որոշում-ԳՈՍՏ 9290 - Ներբանի (տակացուի) խզման աստիճանը-ԳՈՍՏ 9292 - Քթամասի և կրնկամասի դեֆորմացիայի որոշում-ԳՈՍՏ 9135 - Կոշիկի ճկունության որոշում-ԳՈՍՏ 9718 Նմուշառումը պետք է իրականացվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից` լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան ներկայացուցչի մասնակցությամբ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Գառու Գրուպ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 64 | | | |